ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԾԹՆ-Ի ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

ՀՀ կառավարության աշխատակազմ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, **www.gov.am**

Հայտատու երկրի մասին

Հայտատու	Հայաստանի Հանրապետություն
Կոնտակտային անձ	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյան *Էլ. փոստ՝ davit.harutyunyan@gov.am* *Հեռ.՝ (+37410) 51-57-03* Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման ծրագրի փորձագետ Լուսինե Թովմասյան *Էլ. փոստ՝ lusine.tovmasyan@gov.am* *Հեռ.՝ (+37410) 51-59-97* *կայք՝ www.gov.am*
Հայտի ամսաթիվը	2016թ. դեկտեմբերի 28

Գրանցման քայլերը

ԱՃԹՆ 1.1 պահանջ

Կառավարությունը պարտավոր է կատարել միանշանակ հրապարակային հայտարարություն ԱՃԹՆ-ի իրականացման իր մտադրության մասին

Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) ներդնելու գաղափարը ծնվել է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) ծրագրի շրջանակներում: ԲԳԿ-ի Հայաստանի Հանրապետության երկրորդ՝ 2014-2016թթ. գործողությունների ծրագրում[1] ներառված «Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում» հանձնառությամբ սահմանվեց Հայաստանի Հանրապետությունում ԱՃԹՆ-ն ներդնելու գործընթացի մեկնարկը, մասնավորապես՝ նախաձեռնության ներդրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացումը, քննարկումների, բանակցությունների անցկացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը Հայաստանում ներդնել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը ազդարարվել է 2015 թվականի հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի նախագահությամբ տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ժամանակ[2]:

Նիստի ժամանակ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանը ԱՃԹՆ-ի Հայաստանում ներդրման առնչությամբ նշել է. **«Ես շատ կարևորում եմ այս կազմակերպությանն անդամակցելու նախաձեռնությունը և անձամբ հետևելու եմ անդամակցության գործընթացը բարեհաջող ավարտին հասցնելուն: Հայաստանի Հանրապետությունը միշտ կարևորել է բիզնեսի համար**

[1] http://www.gov.am/u_files/file/bkg%20angl.pdf

[2] http://www.gov.am/am/news/item/12061/

թափանցիկ, կանխատեսելի և մրցակցային խաղի ապահովումը: Նախաձեռնությանն անդամակցելու մեր մտադրությունը ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե որքան ենք կարևորում միջազգային ստանդարտների ներդրումը Հայաստանում, ինչպես նաև Հայաստանի ակտիվ մասնակցությունն աշխարհում ընթացող պրոցեսներին, որոնք շատ արագ են փոխվում: Ցանկանում եմ կառավարության անունից հանձնարարական տալ Դավիթ Հարությունյանին, որպեսզի համակարգի այդ գործընթացները և համապատասխան ստանդարտի ներդրման աշխատանքները»: Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվեց ՀՀ կառավարության պաշտոնական վեբկայքում:

2015 թվականի երկրորդ կեսին ՀՀ կառավարության աշխատակազմը ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի աջակցությամբ նախաձեռնեց Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում ծրագրի իրականացումը: Ծրագրի նպատակն է օժանդակել ՀՀ կառավարությանը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության խթանմանն ուղղված ջանքերի, մասնավորապես՝ ՀՀ երկրաբանական ֆոնդի տվյալների թվայնացման և հրապարակման, ԱՃԹՆ-ին միանալուն ուղղված նախապատրաստական քայլերի իրականացման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումների իրականացման հարցում:

2016թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց նոր կառավարություն վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ: Ներկայացվեց 2017 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, որում սահմանված ռազմավարական խնդիրներից են Հայաստանի ճանաչելիության և երկրի նկատմամբ վստահության, ներդրումային գրավչության բարձրացումը, պետություն-մասնավոր հատված համագործակցության խթանումը: Մասնավորապես՝ հանքարդյունաբերության ոլորտում այս ռազմավարական խնդիրների իրագործման համար կարևոր և արդյունավետ քայլ է ԱՃԹՆ-ի ներդրումը Հայաստանում և, սույնից ելնելով, 2017 թվականին ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ներկայացումը ամրագրվեց ՀՀ կառավարության ծրագրում[3]:

[3] http://www.gov.am/files/docs/1950.pdf

ԱՃԹՆ 1.2 պահանջ

Կառավարությունը պարտավոր է նշանակել ԱՃԹՆ իրականացումը ղեկավարող պաշտոնատար անձ

2015 թվականի հուլիսի 28-ին տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչապետը Հայաստանի Հանրապետությունում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման աշխատանքները համակարգող նշանակեց Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին: Նոր կառավարության ձևավորումից հետո ևս Դավիթ Հարությունյանը շարունակեց կատարել ԱՃԹՆ ստանդարտի ներդրման գործընթացը համակարգողի պարտականությունները: Դավիթ Հարությունյանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ բազմաշահառու խմբի նախագահը:

Դավիթ Հարությունյանը լրագրողների հետ հանդիպումների, հարցազրույցների, հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ քննարկումների և այլ միջոցառումների ժամանակ բազմիցս ներկայացրել է ԱՃԹՆ-ի էությունը, որպես կառավարությունների, արդյունահանող ընկերությունների և քաղաքացիական հասարակության կոալիցիա, որը հնարավորություն է տալիս բարձրացնել արդյունահանող ոլորտում բիզնես գործունեության թափանցիկությունը և ապահովել մրցակցային նպաստավոր պայմաններ, և շեշտադրել ԱՃԹՆ-ի ներդրման կարևորությունը հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատու զարգացման գործում: Մասնավորապես, Հրապարակում հեռուստածրագրին տրված հարցազրույցի[4] ընթացքում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանը ներկայացրեց Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին անդամակցության, բազմաշահառու խմբի ձևավորման գործընթացը, նախաձեռնությանը միանալու կարևորությունը և օգուտները երկրի տնտեսության հանքարդյունաբերության ոլորտի կառավարման

[4] https://www.youtube.com/watch?v=pFnKjvfX8KI

թափանցիկության ապահովման, ներդրումային գրավչության բարձրացման տեսանկյունից:

Դավիթ Հարությունյանի նախագահությամբ 2016 թվականի ընթացքում անցկացվեց ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 3 նիստ, որոնց արձանագրությունները հրապարակված են ՀՀ կառավարության պաշտոնական վեբ-կայքի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության էջում[5]:

2015 թվականի նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցեց Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում կայացած Տաջիկստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման և տարածաշրջանային համագործակցության զարգացման կոնֆերանսին: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցեց նաև 2016 թվականի 24-25-ը Պերուի մայրաքաղաք Լիմայում կայացած ԱՃԹՆ-ի 7-րդ համաշխարհային կոնֆերանսին: 2016 թվականի մարտի 3-ին Դավիթ Հարությունյանը հանդիպում ունեցավ ԱՃԹՆ-ի քարտուղարության պետ Ջոնաս Մոբերգի հետ, որի ժամանակ քննարկվեցին Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման հետ կապված հարցերը: ՀՀ կառավարության աշխատակազմը համդիպումներ ունեցավ նաև ԱՃԹՆ-ի քարտուղարության տարածաշրջանի պատասխանատուի և Համաշխարհային բանկի Վաշինգտոնի գրասենյակի ԱԹՃՆ-ի խորհրդատուի հետ:

Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում ծրագրի շրջանակներում 2016 թվականի մայիսին ՀՀ կառավարության աշխատակազմը վարձեց ՀՀ ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը ներկայացնելու համար ԱՃԹՆ-ի ստադարտով պահանջվող պարտադիր քայլերի իրականացման աշխատանքներին և ԲՇԽ-ի գործունեության հետ կապված աշխատանքներին օժանդակող փորձագետ:

[5] http://www.gov.am/am/msgmeeting/

ԱՃԹՆ 1.3 պահանջ

Կառավարությունը պարտավոր է աշխատել քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների հետ և հիմնել ԱՃԹՆ իրականացումը վերահսկող բազմաշահառու խումբ

2015 թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարության աշխատակազմն Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման աշխատանքների շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացրեց մի շարք մարզային հանդիպումներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ[6]: Հանդիպումների նպատակն էր իրազեկել և քննարկել ԱՃԹՆ-ին Հայաստանի միանալու գործընթացը, ներկայացնել ԱՃԹՆ-ի դերը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում, դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և հնարավոր ուղիները, որոնցով քաղաքացիական հասարակության, գործարար հատվածի, կրթական և ակադեմիական հաստատությունների ներուժը կարող է ներգրավվել և օժանդակել Հայաստանում նախաձեռնության ներդրման աշխատանքերին: Հանդիպումների ընթացքում կառավարության կողմից ներկայացվեց ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը վերահսկող մարմնի՝ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ) նախատեսվող կառուցվածքը, անդամների թիվն ըստ խմբակցությունների, ԲՇԽ-ի հիմնական գործառույթները, ինչպես նաև հանքարդյունահանող կազմակեպությունների և քաղաքացիական հասարակության թեկնածու անդամների առաջադրման համար ԱՃԹՆ ստանդարտով ներկայացվող պահանջներն ու ԲՇԽ-ի անդամների ներկայացման վերջնաժամկետները: Հանդիպումներն անցկացվել են Վայոց ձորի մարզի (ք. Եղեգնաձոր), Սյունիքի մարզի (ք. Կապան) և Լոռու մարզի (ք. Վանաձոր) Օրհուս կենտրոններում և Երևանում: 2015 թվականի դեկտեմբերի 11-ին և դեկտեմբերի 14-ին ՀՀ կառավարության աշխատակազմը քննարկումներ կազմակերպեց քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ: Մետաղների արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպութունների ԱՃԹՆ

[6] http://aarhus.am/?page_id=13432

աշխատանքներին մասնակցության պատրաստակամության, ԲՇԽ-ում նրանց ընդգրկվածության, ԲՇԽ-ի հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների խմբակցության անդամների առաջադրման ընթացակարգերի հետ կապված հարցեր:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի ուղղորդմամբ և համակարգմամբ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները անցկացրել են և շարունակում են անցկացնել պարբերական հանդիպումներ Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնում[7] Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ում ներգրավվածության, Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման ազդեցության, ԱՃԹՆ-ի շրջանակներում երկրի ազգային առաջնահերթությունների մշակման և ԱՃԹՆ-ին առնչվող այլ հարցերի քննարկման վերաբերյալ: Բոլոր հանդիպումները արձանագրվում և հրապարակվում են Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի համապատասխան կայքէջում ԱՃԹՆ-ի շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների իրազեկվածության ապահովման, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներկայացնող անդամների գործունեության թափանցիկության ապահովման նպատակով:

ՀՀ կառավարության աշխատակազմում ԲՇԽ-ի անդամների նախնական թեկնածուների հետ հանդիպումների ժամանակ քննարկվեցին խմբակցությունների կողմից բարձրացված՝ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներին, ԲՇԽ-ի գործունեությանն, ԲՇԽ-ի անդամների լիազորություններին, ԲՇԽ-ում որոշումների կայացմանն առնչվող մի շարք հարցեր և դրանց շուրջ ձեռք բերվեցին համաձայնություններ:

Հիմք ընդունելով ԱՃԹՆ թեկնածու և համապատասխանող երկրների փորձը և ելնելով ԲՇԽ-ի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունից ու ԲՇԽ-ի աշխատանքային ճկունությունից՝ որոշվեց, որ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն կազմված է լինելու 15 անդամներից: Հետագայում՝ ԲՇԽ-ի աշխատակարգի մշակման ժամանակ որոշվեց, որ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցություն պետք է ունենա նաև առնվազն

[7] http://crm.aua.am/eiti/

մեկ այլընտրանքային անդամ, սակայն ոչ ավել քան խմբակցության անդամների թիվը:

Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ համապատասխան նախարարությունները ներկայացրեցին առաջարկություններ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող խմբակցության համապատասխան նախարարությունը ներկայացնող անդամի վերաբերյալ: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՀՀ կառավարության խմբակցությունը ներկայացնում են հանքարդյունաբերության ոլորտում լիազորություններ ունեցող նախարարությունների փոխնախարարները: Հայաստանի Հանրապետության հանքարդյունահանող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց կողմից սահմանված ընթացակարգով[8] կազմակերպեցին ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի համապատասխան խմբակցությունը ներկայացնող անդամների ընտրությունը և առաջադրեցին ԲՇԽ-ում իրենց խմբակցությունները ներկայացնող անդամների թեկնածուներին[9]: Հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունները Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ում իրենց խմբակցության անդամների թեկնածուներին առաջադրել են 2016 թվականի մարտի 1-ին: Քաղաքացիական հասարակությունը Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ում իրենց խմբակցության անդամների թեկնածուներին (ներառյալ գիտության ոլորտը ներկայացնող ԲՇԽ-ի անդամը) առաջադրել են 2016 թվականի հունիսի 14-ին:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ն բաղկացած է Հայաստանի Հանրապետության կառավարության, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության խմբակցությունների տասնհինգ անդամներից՝ հետևյալ կառուցվածքով՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության վեց ներկայացուցիչ.
- հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի չորս ներկայացուցիչ.

---

[8] ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունները ներկայացնող անդամների թեկնածուների ընտրության ընթացակարգը http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/Mining_Companies_procedure.pdf, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամների թեկնածուների ընտրության ընթացակարգը http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/Civil_Society_Procedure.pdf

[9] http://www.gov.am/en/eitimsg/

- քաղաքացիական հասարակության հինգ ներկայացուցիչ, որից մեկը՝ գիտության ոլորտի ներկայացուցիչ:

2016 թվականի ընթացքում ԲՇԽ-ի անդամների կարողությունների բարձրացման նպատակով գործընկեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվեցին 4 սեմինար-դասընթացներ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

2016 թվականի մարտի 22-23-ը Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ Միացյալ Թագավորությունից հրավիրված Միացյալ Թագավորության ԱՃԹՆ-ի քաղաքացիական հասարակության ազգային համակարգող Մայլս Լիտվինոֆը անցկացրեց դասընթաց ԱՃԹՆ-ի վերաբերյալ Հայաստանում կարողությունների բաձրացման թեմայով: Մայլս Լիտվինոֆը հրավիրվեց ՀՀ հանրային հեռուստատեսության Հարցազրույց հեռուստահաղորդմանը[10] և ներկայացրեց Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին միանալու առավելություններն ու դրանով ընձեռվող հնարավորությունները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ 2016 թվականի մայիսի 27-29-ը Հանքավանում կազմակերպվեց ԱՃԹՆ կարողությունների զարգացման և փոխվստահության ձևավորման դասընթաց–քննարկում, որը վարեց հարվիրված փորձագետ Տատիանա Սեդովան: Քննարկման ժամանակ ԲՇԽ-ի երեք կողմերը համաձայնության եկան ԲՇԽ-ի գործունեության հետ կապված մի շարք առանցքային հարցերի շուրջ, որից հետո ԲՇԽ-ի երեք խմբակցությունները համաձայնության եկան ԲՇԽ-ի անդամների թեկնածության ներկայացնելու վերջնաժամկետների վերաբերյալ:

[10] https://web.facebook.com/britishembassyyerevan/videos/10153402143945811/

2016 թվականի սեպտեմբերի 19-ին և 20-ին տեղի ունեցավ «Հանքավայրերի ստուգում և ռեկուլտիվացիոն բոնդավորում» թեմայով դասընթացը[11], որը ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամների և հանքարդյունաբերության ոլորտի մի շարք մասնագետների համար: Դասընթացը վարեցին ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի «Յու-Էս Ֆորեստ Սերվիս» կազմակերպության փորձառու մասնագետներ Ռութ Սիգերը և Սոնի Թորնբորոուն: Կազմակերպվեցին քննարկումներ ներկայացված միջազգային և Հայաստանի Հանրապետությունում գործող ընթացակարգերի, առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ: Դասընթացի երկրորդ օրը մասնակիցները ուսուցողական այց կատարեցին Սոթքի ոսկու հանքավայր:

2016 թվականի նոյեմբերի 8-9-ը Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիային դեսպանատան աջակցությամբ Հայաստան հրավիրվեց Ադամ Սմիթ Ինթերնեյշնլ կազմակերպության փորձագետ Ջերեմի Ուիթը, ով Հայաստանի ԲՇԽ-ի անդամներին տրամադրեց խորհրդատվություն ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի կազմման վերաբերյալ[12]: Դասընթացի ընթացքում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն սկսեց Հայաստանի ԱՃԹՆ երկամյա աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքները:

[11] https://www.facebook.com/pg/USAIDArmenia/photos/?tab=album&album_id=1282453495109283

[12] https://www.facebook.com/britishembassyyerevan/posts/10153925573265811

2016 թվականի հունիսի 27-ի ՀՀ կառավարությունում տեղի ունեցավ ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդրանիկ նիստը[13], որի ընթացքում որոշվեց ԲՇԽ-ի առաջիկա աշխատանքների, մասնավորապես ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի, ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի և Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի մշակման և հաստատման ժամանակացույցը: Որոշվեց սկզբնական շրջանում ԱՃԹՆ-ի շրջանակներում ներառել մետաղական հանքարդյունաբերությունը:

ՀՀ ԲՇԽ-ի անդամներ Խաչիկ Հակոբյանը, Արմեն Ստեփանյանը և Էրիկ Գրիգորյանը մասնակցեցին 2016 թվականի հոկտեմբերի 26-27-ը Աստանայում կայացած ԱՃԹՆ-ի 35-րդ խորհրդի նիստին և իրական սեփականատերերի վերաբերյալ տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը:

2016 թվականի օգոստոսին ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի փորձագետի կողմից մշակվեց ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագիծը, որը ներկայացվեց ԲՇԽ-ի անդամների քննարկմանը: 2016 թվականի սեպտեմբերին ԲՇԽ-ի խմբակցությունների հետ կազմակերպվեց 2 հանդիպում, որոնց ընթացքում քննարկվեցին ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծի վերաբերյալ ԲՇԽ-ի անդամների կողմից ներկայացված նկատառումները: ՀՀ ԲՇԽ-ի աշխատակարգը քննարկվեց 2016 թվականի նոյեմբերի 25-ին կայացած ԲՇԽ-ի նիստին, և որոշում կայացվեց որոշակի կարգավորումների փոփոխությունից հետո այն համարել ընդունված: ԲՇԽ-ի աշխատակարգը[14] կոնսենսուսով ընդունվեց 2016 թվականի դեկտեմբերի 26-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ժամանակ:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ի անհատական կազմը հաստատվեց ՀՀ վարչապետի 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը Հայաստանի Հանրապետության միանալու նպատակով բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 1104-Ա որոշմամբ[15]:

[13] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_27_06_2016.pdf

[14] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_TOR_Armenia.pdf

[15] https://www.e-gov.am/decrees/item/16411/

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանի նախագահությամբ՝ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստը[16] գումարվեց 2016 թվականի նոյեմբերի 25-ին, որին հրավիրված էին Հայաստանում օտարերկյա դեսպանությունների, գործընկեր դոնոր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ հրավիրյալներ, զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ: ԲՇԽ-ի նիստի ընթացքում որոշվեց ԲՇԽ-ի առաջիկա աշխատանքների, մասնավորապես՝ ԱՃԹՆ ազգային առաջնահերթությունների և երկամյա աշխատանքային ծրագրի մշակման և հաստատման և Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացման ժամանակացույցը: ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստը լայնորեն լուսաբանվեց հեռուստատեսությամբ և էլեկտրոնային ու տպագիր մամուլում[17]:

[16] http://www.gov.am/am/news/item/12709/

[17] https://www.youtube.com/watch?v=4BJNXNs-1Cc,

http://galatv.am/hy/news/171413/

https://www.youtube.com/watch?v=QE7gXRg43e8

https://www.youtube.com/watch?v=ZY4Ojk95bng

http://armenpress.am/eng/news/869352/first-session-of-eiti-multi-stakeholder-group-held-in-armenian-government.html

http://www.lragir.am/index/arm/0/country/view/143468

ԱՃԹՆ 1.4 պահանջ

Բազմաշահառու խումբը պարտավոր է իրականացնել ընթացիկ աշխատանքային ծրագիրը, որը ծախսագնահատված և համահունչ է ԱՃԹՆ խորհրդի կողմից սահմանված հաշվետվողականության և վավերացման վերջնաժամկետների հետ:

ԱՃԹՆ ազգային առաջնահերթությունների և Հայաստանի ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքները սկսվեցին 2016 թվականի սեպտեմբերին: ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ուսումնասիրվեցին աշխատանքային ծրագրերի կազմման ԱՃԹՆ թեկնածու և համապատասխանող մի շարք երկրների փորձը: Նոյեմբերի 8-9-ը կազմակերպված դասընթաց-քննարկման ժամանակ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն միջազգային փորձագետ Ջերեմի Ուիթի հետ սկսվեցին Հայաստանի ԱՃԹՆ երկամյա աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքները:

2016 թվականի նոյեմբերի 25-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ժամանակ ԲՇԽ-ն որոշեց Հայսատանի Հանրապետության ԱՃԹՆ թեկնածության հայտը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացնել 2016 թվականի վերջին և, համապատասխանաբար, հաստատեց դրա համար պահանջվող աշխատանքների ժամանակացույցը: Նոյեմբերի 26-27-ը Համաշխարհային բանկի աջակցությամբ Աղվերանում կազմակեպվեց աշխատանքային հանդիպում, որի ժամանակ ԲՇԽ-ն քննարկեց և սահմանեց Հայաստանի ազգային առաջնահերթությունները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ստանդարտի սկզբունքներին և պահանջներին բավարարող ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի նպատակներն ու դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը: Կազմակերպվեցին մի շարք աշխատանքային հանդիպումներ ինչպես ԲՇԽ-ի խմբակցությունների ներսում, այնպես էլ ԲՇԽ-ի բոլոր անդամների մասնակցությամբ, որպեսզի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի նախագիծը բերվի վերջնական տեսքի՝ առաջիկա ԲՇԽ-ի նիստում այն հաստատելու համար: 2016

թվականի դեկտեմբերի 16-ին ԲՇԽ-ի մետաղների արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները ներկայացնող ԲՇԽ-ի անդամները հանդիպում կազմակերպեցին Հայաստանի Հանրապետությունում մետաղների արդյունահանմամբ զբաղվող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ժամանակ ներկաների քննարկմանը ներկայացվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի նախագիծը:

2016 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ ԲՇԽ-ի տարեվերջի նիստը: Նիստի ժամանակ կոնսենսուսով հաստատվեցին՝

- Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգը[18],
- Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի 2017-2018 թվականների աշխատանքային ծրագիրը[19],
- ՀՀ ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը:

Որոշվեց, որ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի առաջին հաշվետվությունը կազմվելու է 2015-2016 ֆինանսական տարիների համար, և որի կազմման համար հաշվետվություններ պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության մետաղանակ հանքաքարերի արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն սահմանել է ՀՀ ԱՃԹՆ հետևյալ ազգային առաջնահերթությունները.

1. հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ապահովում

2. հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում

3. պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձի կիրառման, իրավական կարգավորումների բարելավման միջոցով

[18] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_TOR_Armenia.pdf

[19] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Workplan_Armenia_arm(1).pdf

4. պատասխանատու ներդրողների համար մրցակցային ներդրումային միջավայրի բարելավում

5. ոլորտի շահառուների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018 թվականների աշխատանքային ծրագրում առանձնացվել են 6 նպատակներ և սահմանվել են ԱՃԹՆ ստանդարտով պահանջվող, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի կատարելագործմանն ուղղված միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը, անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ու ֆինանսավորման աղբյուրները: ԲՇԽ-ն և ՀՀ կառավարությունը հաստատակամ են ակտիվորեն համագործակցել միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ աշխատանքային ծրագրի միջոցառումների արդյունավետ իրագործման ուղղությամբ:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից հաստատված բոլոր փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետությունում ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում:

Բազմաշահառու խմբի մասին

Անուն Ազգանունը	Պաշտոնը	Կազմակերպությունը	Կոնտակտային տվյալներ (հեռախոսահամաև և էլ. փոստ)
Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնող ԲՇԽ-ի անդամներ			
Դավիթ Հարությունյան	աշխատակազմի ղեկավար-նախարար	Հայաստանի Հանրապետության կառավարություն	(+37410) 51-57-03 davit.harutyunyan@gov.am
Կարեն Իսախանյան	նախարարի տեղակալ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	(+37410) 511302 k.isakhanyan@mta.gov.am
Տիգրան Խաչատրյան	նախարարի տեղակալ	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	(+374 11) 59-71-13 tkhachatryan@mineconomy.am
Դավիթ Անանյան	նախարարի տեղակալ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	(+374 11) 800 313 davit.ananyan@minfin.am
Խաչիկ Հակոբյան	նախարարի տեղակալ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության	(+374 11) 818560 khachik.hakobyan@mnp.am

		նախարարություն	
Վարդան Գևորգյան	նախարարի տեղակալ	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	(+374 11) 560407 vgevorgyan@minenergy.am
Արդյունահանող կազմակերպությունները ներկայացնող ԲՇԽ-ի անդամներ			
Պերճ Խաչատրյան	իրավական աջակցության ծառայության պետ	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն	(+374 93) 596908 pertsh.khachatryan@zcmc.am
Վահե Վարդանյան	փոխտնօրեն	«Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	(+374 93) 767647 vahe.vardanyan@gmail.com
Արմեն Ստեփանյան	կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ	«Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն	(+374 94) 404738 (+374 10) 546037 armen@lydianinternational.co.uk
Արթուր Նիկողոսյան	գլխավոր տնօրենի խորհրդական	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբի-նատ» փակ բաժնետիրական ընկերություն	(+374 98) 977729 (+374 91) 220282 anikoghosyan@geopromining.com
Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ԲՇԽ-ի անդամներ			
Սոնա Այվազյան	գործադիր տնօրեն	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»	(+374 91) 433278

		հասարակական կազմակերպություն	sona@transparency.am
Արթուր Գրիգորյան	նախագահ	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպություն	(+374 91) 451320 art.grigorian@gmail.com
Էրիկ Գրիգորյան	համանախագահ	«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	(+374 55) 667707 erikgrig@gmail.com
Ինգա Զարաֆյան	նախագահ	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպություն	(+374 91) 921264 ingazarafyan@gmail.com
Հարություն Մովսիսյան	դոցենտ, փորձագետ	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոն, ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոն	(+374 93) 340098 harutyunmovsisyan84@gmail.com